



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

<< 08. >> ___03___ 2017թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐԶ

ԿԱՆԱՆՅ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ՝ ՄԱՐՏԻ 8-Ի ԱՌԹԻՎ

Միբեղի՛ կանայք մայրեր և քույրեր, ի սրտե շնորհավորում եմ Ձեզ մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ: Գարնանային այս հիասքանչ տոնը լավ առիթ է՝ ևս մեկ անգամ ցույց տալու մեր անսահման սերն ու հարգանքը Ձեր նկատմամբ, կարևորելու ձեր բացառիկ դերը հասարակության մեջ:

Հայ կինը խոնարհաբար տարել է և՛ դառնություն, և՛ վիշտ, սակայն երբեք չի կորցրել իր հոգու վեհությունն ու կանացիությունը. այսօր էլ նույն նվիրումով շարունակում է իր ավանդն ունենալ հայ ընտանիքի և ազգային արժեքների ու ավանդույթների պահպանման գործում:

Միբեղի՛ կանայք, շնորհավորելով գեղեցիկ այս տոնի կապակցությամբ, մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, երջանկություն, աշխատանքային հաջողություններ, խաղաղություն և գարնանային բարձր տրամադրություն:

Միշտ մնացե՛ք հմայիչ ու բարի:

Հ. ՄԻՄՈՆՅԱՆ